ԷԴՈՒԱՐԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԺԹ. ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1878 թվականի Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով միջազգայնացված Հայկական հարցը, ըստ էության, թողնվեց բախտի քմահաճույքին: Այն նոր, անօրինակ ողբերգություններ, զանգվածային կոտորածներ ու ցեղասպանություն բերեց արեւմտահայերին: Բեռլինի պայմանագիրն ակնհայտորեն ցույց տվեց արեւմտյան տերությունների՝ Աբդուլ Համիդին եւ նրա շուրջը համախմբված պանիսլամիստներին պաշտպանելու հանգամանքը: Շատ ժամանակ չպահանջվեց այդ իրողությունը հասկանալու համար: Արեւմտահայությունը կանգնած էր բացարձակ ոչնչացման վտանգի առջեւ:

Օսմանյան խորհրդարանի հույն անդամ Սուլիոեսը գրում է. «Բոլոր գազանությունները, որ գործում են չերքեզներն ու բաշիբոզուկները Ռումելիայում եւ Բուլղարիայում, ոչինչ են համեմատած նրա հետ, ինչ կատարվել ու կատարվում է Հայաստանում»[1]:

Թուրքիան մերժեց բարենորոգումներ նախատեսող բոլոր առաջարկները, ինչից խուսափելու լավագույն միջոցը հայերի բնաջնջումն էր, եւ ավելի ուժեղացրեց ազգային ճնշումներն ու հարստահարությունները ինչպես հայերի, այնպես էլ քրիստոնյա մյուս ժողովուրդների նկատմամբ: Սկսվեց, այսպես կոչված, «զուլումի» շրջանը: 1880 թ. արդեն սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, ուժեղացնելով գրաքննությունը, արգելեց գործածել «Հայաստան», «հայրենիք» բառերը, կատարեց զանգվածային ձերբակալություններ, կախաղան հանեց մի շարք հայ գործիչների եւ տենդորեն նախապատրաստվեց 1890-ական թվականների ցեղասպանությանը: Եւ այս ամենը արեւմտյան տերությունների լուռ հայացքի առաջ, որոնք ոչինչ չձեռնարկեցին ջարդարարներին կանգնեցնելու համար, չհանդիմանելով անգամ արյունարբու սուլթանին: Հագուրդ

1 «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1878, թ. 37:

տալով իր արյան ծարավին՝ Աբդուլ Համիդը 1894-1896 թթ. բնաջնջեց 300 հազար մարդ:

ԺԹ. դարի 90-ական թվականների հայկական կոտորածների պատմությունն իր վրա է բեւեռել ինչպես հասարակական-քաղաքական մտքի, այնպես էլ պատմաբանների ուշադրությունը: Այդ հարցի լուսաբանման գործում իր արժանի տեղն է զբաղեցնում ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանը: Նա, անդրադառնալով արեւմտահայության զանգվածային ջարդերին նախորդած ժամանակաշրջանին եւ տալով դրա նախապատմությունը՝ եզրակացնում է, որ Հայկական հարցը ծագեց ազգային, սոցիալական անտանելի ճնշման, թալանի ու բարբարոսական կոտորածների իրադրության պայմաններում եւ դարձավ մեծ տերությունների դիվանագիտական խաղերի առարկա:

Նա նկատում է, որ արեւմտահայության մեջ ուժեղացավ ձգտումը դեպի ազատությունը, պայքարը հանուն իր պատվի եւ մարդկային տարրական իրավունքների, մանավանդ, որ կար սերբերի, հույների ու բուլղարների ոգեւորիչ օրինակը: Ի պատասխան թուրքական իշխանությունների դաժան ճնշումների՝ հայերը, որտեղ հնարավոր էր, դիմում էին ինքնապաշտպանության, ազատագրական պայքարի, որը, ըստ պատմաբանի, եղել եւ մնում է ամեն մի ճնշված ժողովրդի անսասան իրավունքը եւ սրբազան պարտականությունը:

Մ. Ներսիսյանը նշում է, որ թուրքական ռազմապավատական բռնապետությունը լսել իսկ չէր ուզում ենթակա ժողովուրդների իրավունքների մասին, եւ ավելացնում. «Ազգային հարցի լուծման համար նա գիտեր միայն մեկ ուղի՝ զանգվածային կոտորածների, ֆիզիկական ոչնչացման ուղին: Իշխանությունները գործում էին հրով ու սրով, անլուր դաժանությամբ»[2]:

Պատմաբանը գտնում է, որ սուլթանական կառավարությունը վարում էր պետական ապարատը եւ ռազմական ձեռնարկությունները հայերից մաքրելու քաղաքականություն, եւ, որպես օրինակ, մատնանշում վառոդի արտադրության վերատեսչությունը Տատյան գերդաստանից վերցնելու փաստը[3]:

Բեռլինի 1878 թ. վեհաժողովից հետո սուլթան Աբդուլ Համիդը եւ նրան շրջապատող բարձր պաշտոնյաները ցինիկորեն հայտարարում էին, որ Հայկական հարցի լուծման կարճ ճանապարհը հայ ժողովրդի բնաջնջումն է, ինչը շուտով սկսեց իրագործվել հրեշավոր միջոցներով[4]: Համիդյան քա-

2 «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում». Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու Մ. Ներսիսյանի խմբագրությամբ: Կազմ.՝ Մ. Ներսիսյան, Ռ. Սահակյան, Երեւան, 1991, Նախաբան, էջ VI (այսուհետ՝ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում»):

3 Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ (այսուհետեւ՝ ՀԱԱ), ֆ. 818, ց. 1, գ. 113, թ. 126, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երեւան, 2002, էջ 71:

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 99:

ղաքականությունը լայնածավալ իրականացվեց 1890-ական թվականներին: Արեւմտյան Հայաստանի լեռնային շրջաններից մեկը՝ Սասունը, 1894 թ. օգոստոս-սեպտեմբերին կողոպտվեց եւ ավերվեց, բնակչությունը սրի քաշվեց առանց սեռի եւ տարիքի խտրության, սպանվեց ավելի քան 10 000 մարդ: Այդ կապակցությամբ Մ. Ներսիսյանը ներկայացնում է ականատեսների ցուցմունքների հիման վրա կազմված հետեւյալ միտքը. «Գելիեգուզանում երիտասարդներից շատերի ձեռն ու ոտը կապկպել են, շարել կողք կողքի, վրաները ցախ լցրել եւ ողջ-ողջ այրել... Մի ուրիշ գյուղում տղամարդիկ կանանց ու երեխաների հետ թաքնվել են քարայրում... թույլերը մեռել են քաղցից. մնացածներին էլ հայտնաբերել են զինվորները եւ սվինահար արել: Սվինն էր այն զենքը, որ հիմնականում գործադրվում էր բոլոր այդ իրադարձությունների ընթացքում...»[5]:

Մ. Ներսիսյանը, դիմելով մի շարք վկայությունների, ներկայացնում է Սասունի իրադարձություններից մեկ տարի անց Կ. Պոլսում, Տրապիզոնում, Էրզրումում, Մարաշում, Սեբաստիայում, Երզնկայում, Վանում, Բաղեշում, Դիարբեքիրում եւ այլ վայրերում սկսված նոր ջարդերը:

Դիմենք մի շարք փաստերի:

Սասունի իրադարձություններն են ներկայացված Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսի՝ 1894 թ. հոկտեմբերի 29-ին Կ. Պոլսում դեսպան Ա. Նելիդովին ուղարկած զեկույցում: Այնտեղ նշվում է, որ թուրքերը Սասունում ոչնչացրել են մոտ 4 000 հայ: Իր դաժանությամբ աչքի է ընկել գնդապետ Իսմայիլ բեյը, որը հրամայել է բռնել գյուղերի ազդեցիկ մարդկանց եւ տանջամահ անել: Բնակիչները, իմանալով այդ մասին, պատսպարվել են սարերում, եւ երբ պահանջել են հանձնվել՝ նրանց անգթորեն ոչնչացրել են եւ վայրագություններ կատարել 25 օր շարունակ ու կործանել 30 գյուղ[6]:

1895 թ. նոյեմբերի 9-ի Մարզվանի հայ բնակչության՝ Սասունում Ռուսաստանի հյուպատոս Նալյոտովին ուղղված նամակում նկարագրվում է այն սարսափելի իրավիճակը, որում հայտնվել են իրենք:

«1895 թ. նոյեմբերի 3/15-ը՝ ուրբաթ օրը, մեր քաղաքի համար սեւ օր դարձավ,- ասված է նամակում,- վշտալի ու սարսափելի օր: Այդ օրը Թուրքիան իր արյունոտ պատմությունը հարստացրեց եւս մի «փառավոր» էջով, արյունոտ էջով, գրված սեւ տառերով՝ ի սոսկումն եւ ի վրդովմունք համայն քաղա-

5 Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Նախաբան, էջ VII:
6 Տե՛ս անդ, էջ 32:

քակիրթ աշխարհի... Թուրքիան մեկ անգամ եւս իր արյունոտ գահն օծեց անմեղ քրիստոնյաների արյամբ»[7]:

Նամակում խոսվում է թուրքերի մեծաթիվ ամբոխի՝ շուկայում գտնվող հայերի կրպակների վրա հանկարծակի հարձակման մասին, ինչին հետեւել է սարսափելի ջարդն ու կողոպուտը: Հայերը սպանվել են դաժան ու սարսափելի մահով, թուրքերը կտրել էին նրանց գլուխները եւ մարմնի մյուս մասերը: Դիակներն այնքան այլանդակված էին, որ անհնար էր ճանաչել: Նրանց բարձել են այն սայլերին, որոնք աղբ էին կրում, եւ տարել հայկական գերեզմանոցը, դարսել չորս շարքով եւ թաղել մեծ փոսում: «Ինչպիսի անհանդուրժելի բարբարոսություն, ինչպիսի մեծ ոճրագործություն, ինչպիսի դաժանություն, ինչպիսի սարսափելի հանդգնություն ու բռնություն թուրքերի կողմից, հանցագործություններ, որոնք աներեւակայելի են նույնիսկ հեթանոսական երկրներում...»[8]: Մ. Ներսիսյանն ուշագրավ է համարում, որ նամակում նախազգուշացվում էր, թե չի բացառվում, որ կառավարությունն իր մեղքը եւ ողջ պատասխանատվությունը բարդի հայերի վրա: Նրանք միաժամանակ ավելացնում են, որ իրենք պատրաստ են ապացուցելու, որ կատարվածի կազմակերպիչը թուրքական կառավարությունն էր[9]:

Ահա մի փաստաթուղթ Չարսանջակի հայ հասարակության կողմից ուղղված նույն՝ Ռուսաստանի հյուպատոս Նալյոտովին (28 նոյեմբերի, 1895 թ.): Այն 13 հոգու ստորագրությամբ խնդրանք էր, աղերսանք՝ պաշտպանության տակ առնելու քրիստոնյա բնակչությանը, որն իր վերջին ժամերն ու րոպեներն է ապրում թուրք բնակչության ու կառավարության թշնամական վերաբերմունքի հետեւանքով[10]:

Խարբերդում ու նրա շրջակայքում տեղի ունեցած սարսափելի իրադարձությունների մասին է գրված 1895 թ. դեկտեմբերի 14-ին Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ուղարկված նամակում, որտեղ ասված էր, թե ինչպես հարձակվողներին օգնության էին հասնում կանոնավոր զորքերը, եւ, ներխուժելով գյուղ, սկսում էին կոտորածը: Հայերը Բուզսուում թաքնվել են եկեղեցում, բայց հարձակվողները այնպես էին շղթայել եկեղեցին, որ ոչ ոք չի կարողացել փախչել, եկեղեցին այրել են: Հայերի մի մասը կրակի զոհ է դարձել: Ովքեր փորձել են փախչել, դաշույնից են ընկել: Առեւանգված ջահել կանայք եւ աղջիկները պատվազրկվել են[11]:

7 Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 109:
8 Անդ, էջ 112:
9 Տե՛ս անդ, էջ 109-112:
10 Տե՛ս անդ, էջ 114-115:
11 Տե՛ս անդ, էջ 118:

Հրոսակապետերից մեկը՝ Սուլեյման բեյը եւ նրա եղբայրը, որոնք հռչակված էին քրիստոնյաների նկատմամբ իրենց դաժան վերաբերմունքով, աչքի ընկան նոր գազանություններով: Նրանք անասունի պես խողխողում էին ամեն մի ձեռքն ընկած հայի: Գազանային սպանություններ ու կողոպուտներ տեղի ունեցան նաեւ Խարբերդի շրջակայքում:

Աղթամարի կաթողիկոսի՝ 1895 թ. դեկտեմբերի 19-ին Կ. Պոլսի հայոց պատրիարք Իզմիրլյանին ուղարկված նամակում խոսվում է հազարավոր անմեղ մարդկանց ոչնչացման, հոգեւորականներին կտտանքների ենթարկելու, կանանց ու աղջիկների գազանային բռնաբարությունների մասին եւ բերվում վիճակագրական տվյալներ կատարվածի վերաբերյալ[12]:

Մ. Ներսիսյանը դիմում է ականատեսների վկայություններին: Ահա Կ.Պոլսի հայերի կոտորածի մասին Օ. Կայդանովայի նամակը հենց Կ. Պոլսից 1896 թ. օգոստոսի 14-ին եւ 15-ին, ով դարձավ թուրքերի կողմից հայերի կոտորածի վկան: Եւ երբ մարդկային երեւակայությունից վեր սարսափելի տեսարանները դիտելուց հետո հարցնում էին, թե ինչ է պատահել, պատասխանը հնչում էր. «Թուրքերը ջարդում են հայերին»[13]:

«Դիակները, որոնք, ինչպես տեսնում էինք, տանում էին ձիասայլերով, հետո լցնում էին մեծ շոգեմակույկները եւ առանց հաշվելու ջուրն էին թափում այն մասում, որտեղ Բոսֆորից Մարմարա ծովը մտնելիս բավականին ուժեղ հոսանք կա... Ասում են, թե սպանվածների դիակներով ծանրաբեռնված 42 շոգեմակույկներ են իրենց բեռը թափել գիշերվա ընթացքում...»[14]:

Նամակում շատ պատկերավոր եւ դիպուկ ասված է. «Այս ամբողջ կոտորածը... մայրաքաղաքում, բոլոր իշխանությունների ներկայությամբ՝ տեղական, թե օտարերկրյա, ընդհարում չէր, պատերազմ չէր, ապստամբության ճնշում չէր, այլ պարզապես զազրելի, համատարած, զանգվածային մի սպանություն, մարդորսություն...»[15]:

Տեղին է ասվածը, ինչը բնութագրում է մի ամբողջ պատկեր, պաշտոնական մակարդակի հասցված մի քաղաքականություն, որի երդվյալ շարունակողն ու սրբությամբ իրագործողները դարձան երիտթուրքերը, եւ չնայած գահընկեց արվեց «կարմիր սուլթանը», բայց նրան հաջորդողներն էլ չտարբերվեցին եւ շարունակեցին այն, ինչը ավարտին չէր հասցրել սուլթան Համիդը: Եվ այդ բոլորը կատարվում էր արեւմտյան տերությունների տեսադաշտում:

12 Տե՛ս անդ, էջ 122:
13 Անդ, էջ 158:
14 Անդ, էջ 161:
15 Տե՛ս անդ, էջ 163:

Պատահական չէ, որ Մ. Ներսիսյանն անդրադառնում է նաեւ ԺԹ. դարի վերջին եւ Ի. դարի սկզբին արեւմտյան տերությունների դիրքորոշմանը, ինչպես նաեւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությանը, ինչի վերաբերյալ սխալ տեսակետներ են արտահայտվել: Նշենք, որ նա հերքում է այն տեսակետը, թե ցարական կառավարությունը վարում էր Արեւմտյան Հայաստանը հայազրկելու քաղաքականություն, ցանկանում էր ձեռք բերել «Հայաստանն առանց հայերի»: Գիտնականի համոզմամբ՝ այս շինծու առասպելը, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ, հորինել են անգլիացի ռուսատյացները:

Հայկական հարցում 1890-ական թվականների ցարական կառավարության վարած քաղաքականության կապակցությամբ Մ. Ներսիսյանը զարգացնում է գիտականորեն հիմնավորված, միեւնույն ժամանակ անկողմնակալ այն տեսակետը, որ Ռուսաստանն այդ տարիներին պաշտպանեց Օսմանյան կայսրության ամբողջականությունը եւ անձեռնմխելիությունը՝ հակառակ իր դարավոր հակաօսմանյան քաղաքականության. պատճառը Ռուսաստանի դեմ ուղղված Անգլիայի մերձավորարեւելյան քաղաքականությունն էր: Ստեղծված իրավիճակում ցարական կառավարության եւ Թուրքիայի շահերը համընկան, եւ ստեղծվեցին «բարեկամական» հարաբերություններ ցարի եւ սուլթանի միջեւ: Մյուս կողմից, ցարիզմը փակեց հայկական ծխական դպրոցները, բարեգործական ընկերությունները, ուժեղացավ մեծապետական ազգայնամոլությունը: Ցարական իշխանությունները Կովկասից Թուրքիա գնացող հայ կամավորների դեմ պայքար ծավալեցին, ինչպես նաեւ նույնը կատարվեց Հնչակյան եւ ՀՀԴ կուսակցությունների դեմ եւ այդ խնդրում հաճախ համագործակցում էին թուրքական եւ ցարական կառավարությունները, վերջինս էլ դեմ էր, որ իր սահմանների վրա, տվյալ դեպքում Արեւելյան Հայաստանում, ստեղծվի հայկական ինքնավարություն կամ «անկախ» պետականություն, քանի որ դա ձեռնտու էր Մեծ Բրիտանիային՝ ռուսական առաջխաղացումը Մերձավոր Արեւելքում կանգնեցնելու համար[16]: Եւ չնայած դրան, Մ. Ներսիսյանը գտնում է, որ ցարական կառավարությունը նպատակ չի ունեցել ոչնչացնել արեւմտահայությանը, քանի որ դա չէր համապատասխանում Մերձավոր Արեւելքում ռուսական կառավարության ռազմավարական քաղաքականության հիմնական սկզբունքներին: Ելնելով դրանից՝ ցարական կառավարությունը արեւմտահայության կոտորածները դադարեցնելու համար դիմել է վճռական միջոցների: Այդ ժամանակ ցարական կառավարությունը երկակի քաղաքականություն էր վարում արեւմտահայե-

16 Տե՛ս **Մ. Ներսիսյան,** Պատմության կեղծարարները, Երեւան, 1998, էջ 88:

րի նկատմամբ: Մի կողմից՝ ցանկանում էր բարելավել նրանց ծանր վիճակը, ապահովել ֆիզիկական գոյությունը, իսկ մյուս կողմից՝ պայքարում էր հայ ազգային կուսակցությունների «քաղաքական բաղձանքների» ու «սեպարատիստական» ձգտումների դեմ:

Մ. Ներսիսյանն ավելացնում է նաեւ, որ ցարական կառավարությանն անհանգստացնում էր Արեւմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժումն արեւելահայության մեջ տարածվելու հանգամանքը, որ այն կարող է արձագանքներ գտնել Կովկասում [17]:

Այս հարցի կապակցությամբ պատմաբանը մատնանշում է 1895-1896 թթ. Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա. Լոբանով-Ռոստովսկուն հանիրավի վերագրվող «Ռուսաստանին Արեւմտյան Հայաստանը պետք է առանց հայերի» հայտարարության փաստագուրկ լինելը: Ինչպես հեղինակն է նշում, ռուսոֆոբներն իրենց հորինած առասպելը հիմնավորելու նպատակով վկայակոչում են այդ հայտարարությունը: Մ. Ներսիսյանը հավաստում է, որ իշխանը մի քանի անգամ առիթներ է ունեցել հայտարարելու, թե Ռուսաստանը դեմ է, որ իր հարավային սահմաններում ստեղծվի հայերի թագավորություն՝ Նոր Բուլղարիա: Այս խոսքերի եւ հորինված առասպելի միջեւ կա մեծ տարբերություն:

Ի դեպ, բրիտանական դեսպանի հետ ունեցած մի զրույցի ժամանակ նույն Ա. Լոբանով-Ռոստովսկին ասել է, թե Ռուսաստանը բախտավոր կլինի, եթե ապահովվեն սուլթանի ենթակա հպատակ քրիստոնյաների կյանքն ու գույքը[18]: Մ. Ներսիսյանի համոզմամբ, ռուսատյացները կարծեք թե կա՛մ տեղյակ չեն, կա՛մ էլ շրջանցում են այդ խոսքերը: Իհարկե, նա չի ժխտում, որ Ռուսաստանում միշտ եղել են ազգայնամոլ բարձրաստիճան պաշտոնյաներ, ովքեր քարոզել են հետադիմական գաղափարներ, բայց նրանց հայտարարությունները պատմաբանն իրավամբ չի նույնացնում ռուսական պետական քաղաքականության հետ[19]:

Ցավոք, հայ իրականության մեջ որոշ հեղինակների կողմից նույնպես շրջանառության մեջ է դրվել այդ տեսակետը: Այսպես, Բ. Բորյանը, Լեոն, հայ բոլշեւիկները, սփյուռքահայ հեղինակ Գ. Լազյանը եւ ուրիշներ բացահայտորեն միակողմանի, սեւ գույներով են ներկայացրել Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արեւելքում, Հայկական հարցում 1890-ական թվականներին:

---

17 Տե՛ս անդ, էջ 89:

18 Տե՛ս А. Киракосян, Великобритания и Армянский вопрос (90-ые годы XIX века), Ереван, 1990, էջ 135:

19 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 107, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Պատմության կեղծարարները, էջ 91:

Բայց ո՞րն է ճշմարտությունը: Մ. Ներսիսյանի հավաստմամբ՝ Ռուսաստանը հանդես է եկել արեւմտահայության պաշտպանությամբ՝ ընդդեմ զանգվածային կոտորածների՝ պահանջելով Աբդուլ Համիդից անհապաղ վերջ տալ դրանք: Անգլիական չիրապարակված խիստ գաղտնի փաստաթղթերի հիման վրա նա ցույց է տալիս, որ հայկական կոտորածների դեմ Կ.Պոլսում գործող եւրոպական դեսպաններից վճռականորեն հանդես է եկել միայն ռուսական դեսպան Ա. Նելիդովը, որ, անձնական տեսակցություն ունենալով Աբդուլ Համիդի հետ, անգամ սպառնացել է, որ հրաման կտա ռուսական նավատորմին ռմբակոծել սուլթանի պալատները, եթե անհապաղ չդադարեցնեն կոտորածները: Սուլթանը տեղի է տվել, հաջորդ օրը, իսկապես, դադարել են կոտորածները Կ. Պոլսում[20]:

Համապատասխան քաղվածքների միջոցով Մ. Ներսիսյանը ցույց է տալիս, որ Ռուսաստանի դեմ այդ շինծու առասպելը ժխտում են նաեւ գերմանական եւ ֆրանսիական հեղինակավոր աղբյուրները:

Նա 1890-ական թթ. պատմական իրադարձությունների աղավաղման ու կեղծման գլխավոր մեղավոր համարում է Մեծ Բրիտանիայի ղեկավար շրջաններին եւ հավաստի փաստարկումներով ժխտում նաեւ Ա. Նելիդովին վերագրվող եւ սուլթանին ուղղված՝ «Կոտորեցե՛ք, Ձերդ մեծություն, կոտորեցե՛ք հայերին» արտահայտության իսկությունը: Ապա ավելացնում է, որ այդ ժամանակաշրջանում Ռուսաստանի հետ էին կապում իրենց փրկության հույսը Մ. Խրիմյանը, Ա. Չուպանյանը, Գ. Ջոհրապը, Կոմիտասը, Հ. Թումանյանը, Անդրանիկը եւ ուրիշներ, ովքեր այնքան գովեստով են խոսել Ռուսաստանի մասին: Իսկ նենգամիտ Ալբիոնի իրական դեմքը Մ. Ներսիսյանը մերկացնում է անգլիական նշանավոր պետական ու քաղաքական գործիչ Լլոյդ Ջորջի խոսքերով. «Հայաստանը զոհաբերվեց մեր կերտած հաղթական զոհասեղանին... Բրիտանական կառավարության քաղաքականությունը ճակատագրական անխուսափելիությամբ հանգեցրեց 1895-1897 եւ 1909 թվականների սահավոր սպանդներին եւ 1915 թ. զարհուրելի եղեռնին»[21]:

Մ. Ներսիսյանն ընդգծում է, որ արեւմտահայության բնաջնջման ծրագիրը եղել է Օսմանյան պետության եւ ոչ Ռուսաստանի նպատակը: Դեռ ավելին, անվանի գործիչներ Գ. Բրանդեսը, Է. Բեռնշտայնը եւ ուրիշներ ժամանակին ընդգծել են, որ Բեռլինի կոնգրեսի որոշումները կործանարար եղան հայության համար, որ մեծ տերությունները, բացի Ռուսաստանից, օգնության

20 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 101, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** նշվ. աշխ., էջ 85:

21 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 101, տե՛ս նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», Նախաբան, էջ XXII, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 94-95:

ձեռք չմեկնեցին սուլթանական Թուրքիայում կոտորվող արեւմտահայերին: Ուստի Մ. Ներսիսյանն իրավացիորեն գրում է. «Որոշ հեղինակներ, չխորանալով գործի էության մեջ, հավատ ընծայեցին անգլիացի այն գործիչներին, որոնք, կեղծելով պատմական փաստերը, փորձում էին հայկական կոտորածների մեղքը գցել Ռուսաստանի վրա»[22]:

Նա միաժամանակ ուշադրություն է դարձնում պարբերական մամուլում արտահայտված այն մտայնության վրա, ըստ որի՝ հայ ժողովուրդը չպետք է ոտքի ելներ օսմանյան տիրապետության դեմ, որ ազատագրական շարժումն ավելորդ էր ու վնասակար, որ արեւմտահայությունը պետք է ունենար ոչ թե ռուսական, այլ արեւմտյան կողմնորոշում, քննադատվում են հայ քաղաքական գործիչներն այն «մեղքի» համար, որ օտարի լուծը թոթափելու նպատակով դիմել են «երրորդ ուժի» օգնությանը, փոխանակ հենվեն սեփական ուժի (ընդգծումները Մ. Ներսիսյանինն են - Է. Մ.) վրա:

Ըստ Մ. Ներսիսյանի՝ հայ ժողովուրդն ապրում էր թվական գերակշռություն ունեցող մահմեդական բնակչության մեջ, միաձույլ ու հավաքական ուժ չէր, հետեւաբար, սեփական ուժով չէր կարող դա անել: Պատմաբանը միաժամանակ պարզաբանում է, որ քրիստոնյա շատ ժողովուրդներ պատմական որոշ իրադրությունում իրենց ազատությունը եւ անկախությունը ձեռք են բերել մեծ տերությունների միջամտության շնորհիվ[23]:

Այստեղ է, որ տեղի է ունեցել «մեծերի» եւ «փոքրերի» շահերի համընկնում: Առնվազն ամբարտավանություն է նրանց մեղադրել «պրիմիտիվության» կամ «քծնանքի» մեջ: Նրանք լավ են հասկացել մեծ տերությունների քաղաքականության ինչպես բացասական, այնպես էլ դրական հետեւանքները, երբեք չեն հակադրել «սեփական» եւ «երրորդ» ուժերը եւ անհրաժեշտ են համարել, եթե այդ հնարավորությունը եղել է, դիմել եւ մեկին, եւ մյուսին: Այսպիսին է պատմաբանի եզրակացությունը [24]:

Մ. Ներսիսյանը հատուկ ուշադրություն է դարձնում այն վերաբերմունքին, որ ռուս մտավորականությունը ցուցաբերել է 1894-1896 թթ. տեղի ունեցած հայոց ողբերգության նկատմամբ:

Իր հոդվածներից մեկում [25] Մ. Ներսիսյանը ներկայացնում է ռուս գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների, գրողների դիրքորո-

22 **Մ. Ներսիսյան,** Հայկական հարցի ծագումը եւ մեծ տերությունները, «ՊԲՀ», 1999, թ. 1, էջ 104:

23 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 113, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Պատմության կեղծարարները, էջ 97:

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 278, թ. 113-114, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** նշվ. աշխ., էջ 97-98:

25 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 172-187, նաեւ գ. 274, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Արեւմտահայերի կոտորածները եւ ռուս մտավորականությունը 1894-1896 թվականներին, «ՊԲՀ», 1997, թ. 1, էջ 15-24, տե՛ս նաեւ նույնի՝ Պատմության կեղծարարները, էջ 151-163:

շումը: Այդ տեսակետից նա բարձր է գնահատում 1896 թ. Մոսկվայում նրանց ջանքերով լույս տեսած, արեւմտահայության կոտորածներին նվիրված հոդվածների եւ այլ նյութերի արժեքավոր ժողովածուն[26]:

Ժողովածուի առաջաբանը գրել է Մոսկվայի համալսարանի միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կոմս Լ. Կամարովսկին: Նա ընդգծել է, որ «հայերի, հույների ու այլ քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարի դրդապատճառը Օսմանյան կայսրությունում տիրող բռնապետական ծանր լուծն էր», ապա նշել, որ «եւրոպական մեծ տերությունները չօգնեցին հայերին, այդ պետք է անի մեր հայրենիքը՝ Ռուսաստանը»[27]:

Մ. Ներսիսյանը մեծ տեղ է հատկացնում Մ. Ռոլեն-Ժեկմենի, Մալկոլմ Մակկոլի, Էմ. Դիլոնի, Ֆր. Գրինի՝ ժողովածուում հրատարակված աշխատություններին՝ հիմնավորելով, որ միջազգային համբավ ունեցող այս հեղինակների ուսումնասիրություններում տեղ գտած փաստառատ նյութերն անհերքելի վկայություններ են հայկական կոտորածների վերաբերյալ:

«Հայաստանը, հայերը եւ միջազգային պայմանագրերը» արժեքավոր ուսումնասիրության մեջ բելգիացի իրավագետ Մ. Ռոլեն-Ժեկմենը ուշադրություն է դարձրել Հայկական հարցին: Մ. Ներսիսյանը հավանություն է տալիս հեղինակի այն կարծիքին, ըստ որի՝ արեւմտահայերի ճակատագրում բացասական դեր է խաղացել անգլիական կառավարությունը: Վերջինս վարում էր հակառուսական քաղաքականություն եւ պաշտպանում սուլթանական պետությանը[28]:

Նույն միտքն է արտահայտված անգլիացի հեղինակ Մ. Մակկոլի «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի նկատմամբ» հոդվածում, ինչը վկայակոչում է Մ. Ներսիսյանը: Այնտեղ բերված փաստերը վկայում են թուրքական ծանր լծի տակ գտնվող հայերի ողբերգական վիճակի մասին:

Հեղինակը հայկական կոտորածների մեղավոր է ճանաչում սուլթան Աբդուլ Համիդին: Նա էր, որ դեռեւս 1890 թ. ծրագիր մշակեց քրիստոնյա բնակչությանը ոչնչացնելու վերաբերյալ: Ինչպես Մ. Ներսիսյանն է նկատում, նա եւս ժխտել է այն հերյուրանքը, որ իբր հայերի կազմակերպած ապստամբություններն են կոտորածների պատճառը, նշել, որ հայերի ապստամբություն կոչվածը միայն առասպել է: Նա ուշագրավ է համարում այն եզրակացությունը, որ կատարել է անգլիացի հեղինակը. «Օսմանյան բռնապետության գլխավոր պաշտպանը անգլիական կառավարությունն է: Եթե վերջինս ցանկանար,

26 Տե՛ս Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М., 1896:

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 172-173, 187, 188, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Պատմության կեղծարարները, էջ 152:

28 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 173-174, 188-189, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 152:

ապա սուլթան Աբդուլ Համիդը ստիպված կլիներ իրագործել խոստացված բարեփոխությունները Արեւմտյան Հայաստանում»[29]:

Մ. Ներսիսյանը բարձր է գնահատում իռլանդացի լրագրող եւ գիտնական Էմ. Դիլոնի «Գործերի վիճակը Թուրքահայաստանում» վերնագրով հոդվածը, որն առաջին անգամ տպագրվել է 1895 թ. անգլերեն, այնուհետեւ ռուսերեն՝ վերոնշյալ ժողովածուում՝ համընդհանուր ուշադրություն ու կարեկցանք հարուցելով արեւմտահայերի նկատմամբ: Էմ. Դիլոնը մի քանի տարի ապրել է Ռուսաստանում, եղել է արեւելյան լեզուների մագիստրոս Պետերբուրգի համալսարանում, տիրապետել ռուսերենին, ֆրանսերենին, գերմաներենին եւ հայերենին՝ գրաբարին: Չորս տարի արեւելագիտություն է դասավանդել Խարկովի համալսարանում: Այդ ընթացքում էլ նա անգլերեն է թարգմանել Եղիշեի՝ Վարդանանց պատերազմին նվիրված գիրքը:

Որպես լոնդոնյան թերթի թղթակից՝ նա 1895 թ. գնաց Թուրքիա՝ տեղում անձամբ ստուգելու ու պարզելու հայկական կոտորածների մասին տարածված լուրերը: Նշենք, որ թուրքական իշխանությունները խուսափում եւ ձգտում էին թույլ չտալ օտարազգիներին այցելել Սասուն, բայց Էմ. Դիլոնը, վտանգի ենթարկելով իր կյանքը, գնաց Արեւմտյան Հայաստան, այցելեց Սասունի շատ գյուղեր: 1895 թ. ապրիլի 3-ին նա մտավ Սասուն, երբ դեռ ծխում էին հրդեհված գյուղերը, եւ սասունցին հողին չէր հանձնել զոհերին, գրեց 25 նամակ-թղթակցություն, որոնք տպագրվեցին «Daily telegraph» թերթում: Իր նամակներից մեկում, որը վերնագրված է «Հայերին բնաջնջելու պաշտոնական քաղաքականությունը», Էմ. Դիլոնը գրում է, որ «Հայաստանը հայաթափելու քաղաքականությունը այնպիսի ծավալներ ունի, որ եւս մեկ կամ երկու տարի ու Եւրոպան կհայտնվի այն իրողության առջեւ, երբ հայ տարրի թիվը չափազանց կրճատված լինելու պատճառով նրա համար առանձին բարենորոգում մտցնելը դառնում է անիմաստ»[30]:

Թաքցնելով իր ճանապարհորդության նպատակը եւ հնարավոր վտանգը, Էմ. Դիլոնը զրուցել է դեպքերի ականատեսների, եւ անգամ այն մարդկանց հետ, ովքեր իրագործել այդ ոճրագործությունը: Նա հավաքել է հայ բնակչության զանգվածային կոտորածների կազմակերպման մեջ թուրքական կառավարության ոճրագործությունը հաստատող հավաստի տեղեկություններ եւ հրապարակել դրանք: Բնաջնջման եւ Հայկական հարցի լուծման քաղաքականությունը նա որակել է որպես ծաղրուծանակ քաղաքակրթության նկատ-

29 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 174-175, 189-190, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** նշվ. աշխ., էջ 153:

30 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 174, 190, տե՛ս նաեւ **Է. Դիլոն,** Իրավիճակը Թուրքահայաստանում, Երեւան, 1997, էջ 10:

մամբ. «Այժմ ապացուցված է, որ Սասունի կոտորածը եղել է Բ. Դռան կանխամտածված գործը եւ նախապատրաստվել է խնամքով ու ի կատար ածվել անգթորեն...»,- գրել է նա[31]:

Շարունակելով իր միտքը՝ Էմ. Դիլոնը մեջբերել է օտարերկրացի թուրքասեր պետական մի գործչի վկայություն, ըստ որի՝ «թուրքական տիրապետությունը Հայաստանում կարելի էր ճիշտ բնորոշել որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն եւ վարձատրվող անբարոյականություն»[32]:

Այնուհետեւ խոսելով Արեւմտյան Հայաստանում տիրող իրավիճակի մասին՝ Էմ. Դիլոնը պատկերավոր գրել է. «Սասունի կոտորածը սահմռկեցրեց ամենասառը սրտերն անգամ: Բայց այս ջարդը երկնային ողորմածություն էր՝ համեմատած այն դժոխային արարքների հետ, որոնք կատարվում են տարվա յուրաքանչյուր շաբաթ եւ յուրաքանչյուր ժամ: Սովալլուկ երեխաների սրտակեղեք հեծեծանքներ, ծերունիների հառաչանքներ, որոնց վիճակվել է տեսնել այնպիսի բաներ, որ նկարագրել չի լինի, բռնաբարվող աղջիկների ու նրբին մանկիկների սարսափելի ճիչեր, մայրերի ողբ, որոնք իրենց զավակներից զրկվել են այնպիսի ոճրագործ եղանակներով, որոնց համեմատությամբ սպանությունը բարերարություն կլիներ, կանանց անմարդկային ծաղրանքներ, որոնք գալարվում են վազերի տակ...

Այսպիսին են այն գործերը, որոնց համար մենք բարոյական պատասխանատվություն ենք կրում...»[33]: Նա գրել է հենց այն ոճրագործությունների մասին, որոնք դեռ շարունակվել են կոտորածներից մեկ տարի անց, գտել, որ այդ հանցագործությունների համար բարոյական պատասխանատվությունն ընկնում է թուրքասեր Անգլիայի վրա: «Նա չի մոռացել նշել, որ, ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանը հայերի նկատմամբ վարել է բարեկամական եւ հովանավորող քաղաքականություն: Ինչպես տեսնում ենք, Էմ. Դիլոնը հանդես եկավ որպես ազնիվ, մարդասեր, իսկական քաղաքացի ու սկզբունքային գիտնական»,- եզրակացնում է Մ. Ներսիսյանը[34]:

Ժողովածուի մեջ զետեղված է ամերիկյան միսիոներ Ֆ. Գրինի «Հայկական ճգնաժամը եւ թուրքերի տիրապետությունը» աշխատությունը, որը նվիրված է 1894 թ. Սասունի կոտորածների զոհերի հիշատակին: Նա աշխատել է Կ.

31 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 174, 190, տե՛ս նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 87, տե՛ս նաեւ **Է. Դիլոն,** նշվ. աշխ., էջ 10-11:

32 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 175, տե՛ս նաեւ **Է. Դիլոն,** նշվ. աշխ., էջ 11:

33 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 174, 190, տե՛ս նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 98, տե՛ս նաեւ **Է.Դիլոն,** նշվ. աշխ., էջ 12:

34 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 175, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Պատմության կեղծարարները, էջ 153-154:

Պոլսում, Վանում եւ Արեւմտյան Հայաստանի շատ վայրերում, լսել Սասունից փախած հայերի, ականատեսների պատմածները: Ֆ. Գրինը գրել է, որ այդ ահավոր կոտորածների մեջ հայերը, չունենալով այլ ելք, դիմում էին զենքի եւ զոհվում արժանավայել ձեւով՝ հանդուգն խիզախությամբ: Մ. Ներսիսյանը կարեւորում է այն հանգամանքը, որ ամերիկյան միսիոները նույնպես ժխտել է այն կարծիքը, թե իբր կոտորածների պատճառը իրենք՝ հայերն էին[35]:

Վերոնշյալ ժողովածուի սկզբում զետեղված է անգլիացի լիբերալների առաջնորդ Վ. Գլադստոնի ճառը, որն արտասանվել է 1895 թ. հուլիսի 26-ին՝ Չեսթերի հանրահավաքի ժամանակ: Դատապարտելով «կարմիր սուլթան» Աբդուլ Համիդի վայրագությունները եւ ջերմ խոսքեր հնչեցնելով հայերի հասցեին՝ անգլիացի հանրահայտ պետական գործիչը, անդրադառնալով Սասունի սարսափելի կոտորածին, ասել է. «Ով անձամբ ծանոթանա փաստերին, կհամոզվի, որ մարդկային լեզվի ուժը հազիվ թե ի զորու լինի նկարագրելու այն, ինչ իրականում տեղի է ունեցել ու տեղի է ունենում, եւ որ չափազանցությունը, անգամ եթե մենք հակված էլ լինեինք դրան, մեր ուժերից վեր կլիներ...»[36]:

«Հայկական հարցը Թուրքիայում» հոդվածում Գր. Դիեւը (Գր. Ջանշյան) մերժել եւ վճռականորեն հանդես է եկել ռուս հայատյաց մի շարք հետադեմ պարբերականների դեմ՝ համոզված լինելով, որ Ռուսաստանը պետք է օգնի հայ ժողովրդին, որովհետեւ կար դրա նախադեպը, այն է՝ բալկանյան ժողովուրդների ազատագրումը օսմանյան ծանր լծից:

Մ. Ներսիսյանը բարձր է գնահատում նաեւ 1897 թ. դարձյալ Մոսկվայում լույս տեսած հոդվածների մյուս ժողովածուն[37]: Հարուստ ու բազմաբովանդակ այդ հատորի խմբագիրն էր հայ անվանի հասարակական գործիչ Գրիգոր Ջանշիեւը (Ջանշյան), որին զգալի չափով օգնել է ռուս գիտնականների, գրողների, հրապարակախոսների մի ամբողջ խումբ:

Իրավացի է Մ. Ներսիսյանը, որ նրանց հաջողվել էր արեւմտահայերի ծանր վիճակի մասին տեղյակ պահել ռուս ընթերցողին եւ բողոքի ձայն բարձրացնել թուրք ջարդարարների դեմ: Մատնանշվում է ռուս անվանի հրապարակախոս Վ. Գոլմստրեմի «Հայ եղբայրներ» հոդվածը: Այնտեղ խոսվել է Անգլիայի հակահայկական քաղաքականության մասին, ընդգծվել այն, որ հայ ժողովրդին իրական օգնություն ցույց կտա միայն Ռուսաստանը:

Վ. Գոլմստրեմի երկրորդ հոդվածը նույնպես զետեղված է ժողովածուում, որի հիմքում ընկած են ամերիկյան միսիոներներ Ռինդել եւ Հելեն Հարիս ամուսինների անգլերեն հրատարակած գրքի նյութերը: 1896 թ. շրջե-

35 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 175, 191, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** նշվ. աշխ., էջ 154:

36 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 175, 191, տե՛ս նաեւ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 99, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 154:

37 “Братская помощь пострадавшим в Турции армянам”, М., 1897.

լով Արեւմտյան Հայաստանում, նրանք, որպես ականատես, պատմում են թուրքական ոճրագործությունների մասին: Վ. Գոլմստրեմը, ելնելով այդ փաստերից, Ուրֆայում տեղի ունեցած ջարագործությունների մասին գրել է. «Ջարդերը կազմակերպվել են պարբերաբար, զինվորների մի խումբ սպանում էր տղամարդկանց քաղաքի կենտրոնական թաղամասում, երկրորդ խումբը հետապնդում էր կանանց եւ երեխաներին, վերջապես, երրորդ խումբը թալանում էր դատարկ տները: Թուրքերը ձգտում էին սպանել 10 տարեկանից բարձր արական սեռի բոլոր մարդկանց»[38]:

Ըստ ամերիկյան միսիոներների վկայությունների՝ նման գազանություններ են տեղի ունեցել նաեւ Մուշում, Վանում, Բիթլիսում, Զեյթունում եւ ամբողջ Փոքր Ասիայում:

Հարուստ նյութեր են պարունակվում ժողովածուի երկրորդ մասում: Այնտեղ կան հայկական, ռուսական, ֆրանսիական ու գերմանական աղբյուրներ, որոնցից Մ. Ներսիսյանը մատնանշում է երկուսը: Գերմանացի մարդասեր Յոհաննես Լեփսիուսը երկար տարիներ Օսմանյան կայսրության հայերի վիճակի մասին փաստեր է հավաքել եւ ուսումնասիրել: 1896 թ. Բեռլինում լույս տեսավ նրա առաջին գիրքը՝ «Հայաստանն ու Եւրոպան», որտեղ բազմաթիվ վավերագրական տեղեկություններ էին հավաքված 1894-1896 թթ. հայկական կոտորածների մասին[39]:

Իր մտքերը հիմնավորելու համար Մ. Ներսիսյանն օգտագործել է 1897 թ. Փարիզում հրապարակված ֆրանսիական կառավարության պաշտոնական վավերագրերը, որոնք պարունակում են հարուստ տվյալներ հայկական կոտորածների մասին: Նա շեշտում է, որ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար, թուրքամետ Գ. Հանոտոն, խոսելով Տրապիզոնում 1895 թ. հոկտեմբերին տեղի ունեցած ջարդերի մասին, խոստովանել է, որ ջարդերը ղեկավարում էին թուրքական իշխանության ներկայացուցիչները[40]:

Մ. Ներսիսյանը կարեւոր նշանակություն է տալիս ժողովածուում հրապարակված Լ. Տոլստոյի՝ Գ. Ջանշյանին ուղղված նամակին, որտեղ ռուս աշխարհահռչակ գրողը ողջունել է ժողովածուի հրատարակությունը եւ այն քայլերը, որ կատարվում էին ողբերգական վիճակում գտնվող արեւմտահայությանն օգնելու համար[41]:

Պատմաբանը կարեւորում է, որ ժողովածուի խմբագրությունը, բացի իր հիմնական խնդրից՝ բողոքել հայկական կոտորածների դեմ, նպատակ ուներ

38 ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 179, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 156:

39 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 179, 194, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, Պատմության կեղծարարները, էջ 157-158:

40 Անդ:

41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 179, 195, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 157:

ստեղծել հետաքրքիր բովանդակությամբ մի գիրք, որի վաճառքից ստացած գումարը տրամադրվեր որբ երեխաներին ու մյուս հայ սովյալներին: Այդ խնդիրը նույնպես լուծվել է հաջողությամբ: 1898 թ. հուլիսին գրքի վաճառքից գոյացած գումարը կազմել է մոտ 30000 ռուբլի (ոսկով), որից շուրջ 16 000-ը փոխանցվել է Կ.Պոլսի ռուսական դեսպան Ա. Նելիդովին, որն էլ տրամադրել է Կ. Պոլսի հայոց պատրիարքին, ում խնամքին էին հանձնված մոտ 30000 որբեր[42]:

Նշենք բնորոշ մի հանգամանք եւս: Ժամանակի հայ մամուլը՝ «Մշակը», «Հնչակը» եւ այլն, գրել են, որ ռուս շատ մտավորականներ հանդես են եկել հայ ժողովրդի պաշտպանությամբ: Եւ ի պաշտպանություն արեւմտահայերի՝ արտահայտել են իրենց բողոքը հայ ժողովրդի դահիճների դեմ եւ տպագրել հոդվածներ ռուսական մի շարք թերթերում եւ հանդեսներում:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մ. Ներսիսյանի հաղորդումն այն մասին, որ ողբերգական վիճակում գտնվող արեւմտահայությանը զգալի օգնություն ցույց տվեցին նաեւ Ռուսաստանի պաշտոնական շրջանները: Վկայակոչելով 1897 թ. դեկտեմբերի 11-ին Նիկոլայ 2-րդ կայսեր ստորագրած հրամանագիրը՝ ըստ որի՝ ամբողջ երկրում անցկացվեց հանգանակություն՝ հայ գաղթականներին նյութական ու բարոյական օգնություն կազմակերպելու համար, Մ. Ներսիսյանը նշում է, որ այդ բարեկամական ավանդույթը շարունակվեց նաեւ Մեծ եղեռնի տարիներին[43]:

Այս խոսուն կռվաններով էլ նա հակահարված է տալիս արեւմտյան պատմագիտության մեջ իշխող այն տեսակետին, թե իբր ցարական կառավարությունն ու ռուս մտավորականությունն անտարբեր են եղել արեւմտահայերի ողբերգության նկատմամբ: Արժանի հակահարված են ստանում նաեւ այն հեղինակները, ովքեր հայկական կոտորածների գործում հավասարաչափ մեղավոր են համարում Թուրքիային եւ ցարական Ռուսաստանին, ինչը, Մ. Ներսիսյանի կարծիքով, արտառոց, սխալ տեսակետ է: Փաստերը, ինչպես տեսնում ենք, հակառակն են ապացուցում:

Այսպիսով՝ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, խուսափելով բարենորոգումներից, տենդորեն նախապատրաստեց եւ ԺԹ. դարի 90-ական թվականներին արեւմտյան տերությունների թողտվությամբ իրականացրեց արեւմտահայության զանգվածային կոտորածներ: Ի դեպ, ակադեմիկոս Մ. Ներսիսյանն այն նույնպես որակում է որպես ցեղասպանություն:

---

42 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 180, 181, 182, 196-197, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան**, նշվ. աշխ., էջ 159:

43 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 256, թ. 181-182, 198, 199-200, տե՛ս նաեւ **Մ. Ներսիսյան,** Պատմության կեղծարարները, էջ 160-161:

РЕЗЮМЕ

Рассматривая период, предшествующий армянской резне 90-ых годов 19-ого столетия и обсуждая предисторию, академик Мкртыч Нерсисян приходит к выводу, что армянский вопрос возник в условиях невыносимого национального и социального гнета, грабежа и варварской резни и стал предметом дипломатических игр Великих Держав.

Следовательно, Армянский вопрос, который стал международным благодаря 61-ой статье Берлинского конгресса, по существу был брошен на произвол судьбы. Турция отвергла все предложения относительно реформ и нашла наилучший и кратчайший путь избежать его путем физического уничтожения армян.

Таким образом, султан Абдул Гамид 2-ой, избегая реформ, лихорадочно подготовил и попустительством Великих держав осуществил массовую резню армян.

SUMMARY

Coming to the previous time of the Western Armenian massacres of the 1890s and giving the prehistory, academician M. Nersisyan comes to the conclusion, that The Armenian Issue originated in the conditions of unbearable national and social pressure, of robbery and barbarian massacres and became a subject of diplomatic games of the Great Powers.

Hence, The Armenian Issue, which became international at Berlin Congress /art. 61/ was left to its own fate. Turkey turned down all the suggestions about reforms and found the best and the shortest way to avoid it: the Armenians' physical destruction.

Thus, avoiding the reforms, sultan Abdul Hamid II rapidly prepared and having the Great Powers' connivance in the 1890s fulfilled the Armenians' mass pogroms. By the way, M. Nersisyan calls it "genocide" too.